Քաղցկեղի տարածվածությունը ՀՀ-ում

Քաղցկեղի կանխարգելման և բուժման ոլորտներում բժշկության ձեռք բերած հաջողություններով հանդերձ՝ այսօր աշխարհում շարունակվում է քաղցկեղի տարբեր տեսակների առաջնային հիվանդացության աճը: Բարձր է մնում նաև մահացության մակարդակը: Ըստ Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության տվյալների՝ տարեկան քաղցկեղից աշխարհում մահանում է մոտ 10 միլիոն մարդ, որը մահացու հիվանդությունների մեջ զբաղեցնում է 2-րդ տեղը:

Քաղցկեղի և ընդհանրապես չարորակ նորագոյացությունների առաջացման հիմնական գործոններն են ծխախոտի օգտագործումը, որն, ըստ տարբեր աղբյուրների, հանդիսանում է քաղցկեղներից մահացության մինչև 30%-ի պատճառ, ալկահոլի չարաշահումները և ինֆեկցիոն հիվանդությունները, որոնք 15-20%-ի պատճառն են: Քաղցկեղով հիվանդացությունը կտրուկ աճում է նաև տարիքի հետ բջիջների վերականգման մեխանիզմների արդյունավետության նվազման պատճառով: Նպաստող գործոններից են անառողջ սննդակարգը, ֆիզիկական ակտիվության ցածր մակարդակը և այլ գործոններ:

Հայաստանի Հանրապետությունում քաղցկեղի հիվանդացության վիճակագրական տվյալները համադրելի են միջազգային ցուցանիշների հետ: Մեր հանրապետությունում քաղցկեղ ավելի շատ հանդիպում է կանանց մոտ, թեև տղամարդկանց համեմատ տարբերությունը մեծ չէ. քաղցկեղ ունեցողների 55%-ը կանայք են , 45%-ը՝ տղամարդ: Կանանց շրջանում քաղցկեղի ամենատարածված տեսակը կրծքագեղձի քաղցկեղն է, տղամարդկանց շրջանում՝ թոքի: Երկուսի դեպքում էլ տարեկան գրանցվում է մոտ 1300-ական նոր դեպք: Վերջին տվյալների համաձայն՝ Հայաստանում 2021-2022թթ.-ին չարորակ նորագոյացությունների ընդհանուր թիվը 7,5%-ով աճել է՝ հասնելով 54519 դեպքի: 2017-2021թթ.-ին քաղցկեղի դեպքերը 20%-ով ավելացել են, սակայն, դրան զուգահեռ, նվազել է կյանքում առաջին անգամ գրանցվող դեպքերի թիվը՝ 9%-ով: Քաղցկեղով հիվանդների ամենաշատ գրանցումը արձանագրվել է Լոռու մարզում, ապա՝ Երևանում, Շիրակի և Կոտայքի մարզերում, նվազագույնը՝ Սյունիքի մարզում: 2021թ տարեվերջին Լոռիում գրանցվել է քաղցկեղի 4628 դեպք, իսկ Սյունիքում գրանցվել է 1874 դեպք:

Կանանց մոտ կյանքում առաջին անգամ հաստատված (այսինքն՝ նրանք երբեք չեն ստուգվել և տեղյակ չեն իրենց առողջական խնդրի մասին) չարորակ նորագոյացությունների մեջ նույնպես առաջին տեղը զբաղեցնում է

կրծքագեղձի քաղցկեղը՝ մոտ 50%:

2000-ական թվականներին կրծքագեղձի քաղցկեղի տարեկան արձանագրվող թիվը մոտ 600 էր: Այժմ այն կրկնապատկվել է. առավել հաճախ դեպքերը գրանցվում են 45-55 տարեկան կանանց մոտ, նաև՝ 65-ից բարձր տարիքում:

Կրծքագեղձի քաղցկեղի հայտնաբերման տոկոսը բարձր է Տավուշի, Լոռու, Սյունիքի մարզերում, նաև՝ Երևանում, այդտեղ գործում են սքրինինգային ծրագրեր (ներդրվել է 2021թ. հունվարից, ծրագիրն անվճար է):

Սքրինինգը, կոնկրետ կրծքագեղձի քաղցկեղի դեպքում, որևէ գանգատ չունեցող, առողջ կանանց մոտ համապարած մամոգրաֆիկ հետազոտություն է, որի արդյունքում հնարավոր է հայտնաբերել ռոռուցքային գոյացություններ կամ նախաքաղցկեղային վիճակներ՝ ամենավաղ փուլերում, որոնց մասին կինն ինքնուրույն կարող էր իմանալ մի քանի տարի անց՝ արդեն բարդացած վիճակում, ինչը, բնականաբար, կփոխեր բուժման ամբողջ ընթացքն ու արդյունքը: Սքրինինգ իրականացվում է նաև այլ հիվանդությունների դեպքում:

Տղամարդկանց մոտ, առավել տարածված է շնչափողի, բրոնխների, թոքի քաղցկեղը: Կյանքում առաջին անգամ հայտնաբերված քաղցկեղի 30%-ից ավելին բաժին է հասնում հենց այս տեսակին: Հաջորդ, առավել հաճախ հանդիպող քաղցկեղի տեսակը միզապարկի, շագանակագեղձի, ստամոքսի քաղցկեղն է:

Առողջապահության ազգային ինստիտուտի հրապարակած վերջին տվյալների համաձայն՝ Հայաստանում ամեն 54-րդ մարդ ունի քաղցկեղ:

Փետրվարի 4-ը Քաղցկեղի դեմ պայքարի միջազգային օրն է:



Որպես ոչ վարակիչ հիվանդություն քաղցկեղը կարելի է հաղթահարել՝ վաղ հայտնաբերման հետազոտությունների և ժամանակին բուժում ստանալու միջոցով